# Սուրբ Կարապետն էր մշեցի
# Surp' Karapetn er məshets'i




1. Սուրբ Կարապետն էր մըշեցի,
Դոր որ կացի նա հիշեցի,
Մըտիցս ելավ՝ նստա լացի,
Մուրատս ետու՝ ելա գացի:
*Մուրատատու՛ր Սուրբ Կարապետ:*

2. Սուրբ Կարապետ բանձր տեղ է,
Ուր չորս բոլոր հայոց գեղ է:
Մատաղ բերին գառն ու մագին,
Մատաղ էրին սուրբ կիրակին:
*Մուրատատու՛ր Սուրբ Կարապետ:*

3. Սուրբ Կարապետ բանձրիկ բոլոր,
Իր ճամբախն ա ոլոր-մոլոր,
Իր դուռ կգան շատ ըխտավոր,
Որ պայավոր, որ ձիավոր,
Պայավորին մուրատ իտա,
Ձիավորին՝ կարմիր խնձոր:
*Մուրատատու՛ր Սուրբ Կարապետ:*

1. Surp' Karapetn er məshets'i,
Dor vor kats'i na hishets'i,
Mətits's yelav nəsta lats'i,
Murats yetu yela gats'i.
*Muratatur Surp' Karapet.*

2. Surp' Karapet bandzər tegh e,
Ur ch'ors bolor hayots' gegh e.
Matagh berin garrn u magin,
Matagh erin surp' kirakin.
*Muratatur Surp' Karapet.*

3. Surp' Karapet bandzrik bolor,
Ir chambakhn a volor-molor,
Ir durr kəgan shat əkhtavor,
Vor payavor, vor dziavor,
Payavorin murat ita,
Dziavorin karmir khəndzor.
*Muratatur Surp' Karapet.*